

Դադարի մկանունքը կը թունան, այս
տեսակներն կ'ըսուին Կամաւոր շրջման
մկանունք, ինչպէս են. Բազկաց, Ոտից,
Մատանց, Միջաց, Պարանոցի և այլ
այն տեղերու Մկանունքը, որք մեր կա-
մաց համեմատ կը շարժին կամ կը դաւ
դարին: Բայց կան Մկանունք ալ, որք
ոչ թէ մեր կամբովն, այլ յատուկ օ-
րէնքովլ մը կը կծկին կամ կ'երկարին.
ինչպէս են, Արտի, Ստամբուխ, Աղեաց
եւ ուրիշ Սննդեան գործարաններու
Մկանունքը, որոց շարժումն մեր կամ-
քէն կոխումն չունի, այս տեսակներն
ալ կը կոչուին Ակամայ շրջման Մկանունք:

Կայութիւն և Գնացք. — Մարդոյ թէ
մկանունքը եւ թէ բոլոր գործարան-
ները այնպիսի գիրքով գետեղուած են,
որ իւր Կայութիւնը մարմնոյն ուղիղ և
հաստատուն գիրքովլ երկու ոտից վե-
րայ կենալովք կ'ըլլայ: Ոտից լսյնու-
թիւնը իւր բովանդակ ծանրութիւնը
կրելու բաւական խարիսխ է. Կանքը
բունին ծանրութիւնը հաւասարակը-
ռելու կը ծառայէ, և մէջքէն վար ե-
ղած մկանանց զօրութիւնը կ'օգնէ ազ-
գերց եւ Սրունից ոսկորներն ուղիղ
գիրքովլ պահելու: Իսկ Շարժումը
կամ Գնացքը կը կատարուի, երբ
մարմնոյ ծանրութիւնը միմիայն ոտից
միոյն վրայ յենլովլ, միւսը ծնգաց յօդ-
ուածոյն ծալուածքովն գետնէն բարձ-
րանալովլ յառաջ կը նետուի, այսպէս
յաջորդաբար, որովլ մարդ կարող է
զինքը մի տեղէ ուրիշ տեղ փոխադրել:
Քալուածքը՝ գնացած տեղուն զրից
համեմատ կը տարբերի: Զառ ՚ի վայր
տեղ մը գնալու ատեն մարմինը յա-
ռաջացած ոտից վրայ կը ծանրանայ,
զըր կրելու կ'օգնեն Զստոսկերաց տա-
րածիչ մկանունքն և այս է պատճառը
որ զառ ՚ի վայր իջնալու ատեն մարդ
աւելի յոդնութիւնը միջաց վրայ կը
դժայ. իսկ զառ ՚ի վեր ելնելու ատեն

մարմինը ետ մնացած ոտից վրայ կը
ծանրանայ, զըր կրելու կ'օգնեն ծեղաց
եւ կոճիներու տարածիչ մկանունքն,
որովլ եւ յօդնութիւնը աւելի կոճիկ
ներու վրայ կը զգացուի:

Ասոնք են ահա մարդոյ մասնաւոր
կամ ամբողջական Շարժման ծառայող
գործարանները, թէ եւ Զղերն եւս
մասամբ մի կը մասնակցին այս գործո-
ղութեան, բայց իրենց պաշտօնը աւել-
իլ Զգացման վերաբերելով՝ հետեւեալ
գլացն մէջ պիտի խօսիմք ասոնց վրայ:

(Եպուակութիւն:)

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Բ Լ Լ Է Ր Ի

(Շարունակութիւն և վրշ. աևս թիւ 10)

Ելլեր իւր նիւթին յարմար ձեւ
մ՝ որոշելովլ գերմանական ողբերգուու-
թեան մեծավերջ ոտանաւորը թողուց
եւ Վալլանութիւնի բանակը գերմանական
նախկին կատակերգուաց գործածած
շափովլ նոյնայանգ ոտանաւորովլ գրեց:

Հաստատուած է, որ Գարուջնեա-
նի երդումը Շիլլերինը չէ, այլ Կէօ-
թէինը, որ յօժարութեամբ նոյն ժա-
մանակի մողովրդական երդմանց նմա-
նիլ կ'ուզէր: Կ'ըսուի թէ նա ուրիշ
բան ըրած չէր, բայց եթէ նոյնայանգ
ոտանաւորի շրջած Սանդա — Գլարա
անուն կրերի մը գրուածները, որոց մի
քանի հատակոտրները որահուած են:

Նիլէր 1798 տարւոյն վերջը առաջին անգամ Վաղանագէնը ներկայացրց Վէյմարի թատրոնին մէջ, զոր Կէօմէն հաստատած էր և կը վարէր դայն, աւելքրդ է տօնել որ այս թատրոնութիւնը մէջ յաջողութիւնը ըստացաւ, Հաստարակութիւնը հիացմամբ գրաւեցաւ և Վէյմարի դուքսը Նիլէրի տաղանդին վերայ չափազանց զարմացաւ եւ ստիպեց զնա, որ վերջնական կերպով ՚ի Վէյմար հաստատէ իւր բնակութիւնը եւ նա ուրախութեամբ հնաղանդեցաւ: Այն ժամանակ երկրարդ անգամ իւր անձն թատրոնագրական արուեստին նուիրեց լիովին, մի քանի տարւոյ մէջ միմեանց յաջորդեցին Օրլէանի օրիորդը⁽¹⁾, Մէտայի նշանածը, եւ Մարի Սորուարը: Յառաջադրոյն թարդմանած էր Եւրիսկեդէսի իդիտինէն յ0լի⁽²⁾: Այս մի և նոյն ժամանակամիջոցին մէջ ՚ի լոյս ընծալեց նաեւ Մարտինի, Ֆիրտանդի, այսինքն

(1) Օրլէանի Օրիորդը (Ժան ա' Արք), մեծաւերացակ դիցազնուհին, շնանական աղջեկ մէ՛ր: աղքատ ծնողաց գուստը: որ ծնաւ Լորենի Տունեմի գիւղը 1409 ին և Աս: իւր Տունեւութամեայ համակին մէջ, հաւատալավը թէ Աստուած իրեն կը հրամայէր Անկիեցիներէն նեղուած Ֆրանսացիքն ազատել, Նարը էը գտնելու համար ՚ի զուրժ գնաց: Օրլէանի պաշարումը վերցնել տուաւ (1429), յաղթութենէ ՚ի յաղթութիւն առաջնորդելով զթուգաւորը՝ Խէյմին մէջ օծել տուաւ զնա, և ժամանակէ մը յետոյ Գոմովէն քաղաքի պաշարման մէջ կալնաւորելով (1430): Անկիեցւոց վաճառեցաւ, որ զայն իրը վուեկ կենդանւոյն այրեցին Ռուանի մէջ 1451 մայիս 50 ին:

(2) Խիմինի: գուստը Ալեսեմնեսորա և Ագամեմնինի: Ցունաց նաւերն ՚ի Տրոլագա արշաւելու համար Բէռլիֆից Օլիս քաղաքը Ժաղոված ժամանակ Արտեմիս նաւարկութեան կարեւոր հովը գագրեցւոց Արքիացւոց Ագամեմնին թագաւորին պայրացած մնելուն համար: վասն զի Ագամեմնին իւր սիրելի Եղնիկն զարկած էր: Պատգամ հարցուելով իսկացան որ քաւութեան համար պետք է Ագամեմնինի սիրելուն կամքին գուստը զնէլ: Ագամեմնին բանակը իւր զէմ չը գրգռելու համար պարտաւորեցաւ հնաղանդիւ: բայց երբ աղջեկը բագինն հանեցին:

Կօծծիի (1) Իդաւեկան Շինուալեան եւ Բիգարի (2) Անդր ու Մէնէյմ (3) և Ֆջն ու առողին վերնագրով երկու ֆրատական կատակերգութեանց թարդմանութիւնները: Բացայայտ կը տեսնուի թէ ինչ յարատեւութեամբ բոլոր թատերագրական միջոցներն կը հետազօնէր և նորա բոլոր տեսակներն կ'ուստմասիրէր: Արդարեւ նա իւր բովանդակ կենաց մէջ բարելաւելու փափաքանօք լի էր: երբէք իւր անձէն բաւականացափ գոհ չէր: իւր տաղանդի այս երկրորդ շրջանին մէջ, իւր ողբերգութեանց գեղեցկութեանց մէջնէն, դիւրին է նշամբէլ այն մարդը, որ անդադար նոր ձեւեր կորսնէր եւ նոր ձիգեր կ'լինէր:

Նիլէր իւր թատերագրական աշխատութեանց մէջ քնարերգական բանաստեղծութիւնը չէր թողղուր: Մի և նոյն ժամանակ բազմաթիւ նշանաւոր քերթուածներ յորինեց: Զանդակի հընընին, որ խիստ մեծ յաջողութիւն ունեցաւ, Գասանեդրի Երգը⁽⁴⁾, յաղլուալեան

Արտեմիս գթալով նման նորա տեղ Եղնիկ մը զրատ և օրիորդը յափշտակելով Տաւրիս տարաւ: որպէս զի անդ իւր մէկներն մէջ քրմուհի լինի:

(1) Հարլ Կօծծի: հոշակաւոր թատերագիր, ծնաւ ՚ի Վէնետիկ և մեռաւ ժթդ գարուն ոկիզըները:

(2) Լուի Պենուա Բիգար: նշանաւոր թատերագիր, ծնաւ 1769 ին ՚ի Գարիդ և մեռաւ 1828 ին: Նախառակէս հաշակեցաւ իրիւ հեղինակ, յաջորդաբար զանազան թատրոններ վարեց և 1807 ին Ֆրանսից Ակատեմիան ընդունուեցաւ: բաց ՚ի բազմաթիւ թատրերգութիւններէ, ունի նաև քանի մի վեպէր:

(3) Մէնէյմ (Menechmes): անուն երկուորեակ եղբարց, որք խիստ համանման էին միմեանց: Սոքաբազմթիւ կատակերգութեանց նիւթ եղած են:

(4) Գասանեդր: Տրոյից Պիհամու թագաւորին և Հեկաբէի գուստըը, մարգարեական ձիբք ընդունեց: Նախադէս յայտնեց իւր հայրենակցաց այն թշուառութիւններն, որոց պիտի ենթակըւէն Տրոյից առմամբ: բայց նորա չէին հաւատարը Սա Ագամեմնինի վլճակելով՝ Յունանատան տարուեցաւ, ուր Ագամեմնինի հետ սպանուեցաւ:

Գծնը, կամ Յունաց նաև պարմին լուն, եւ իւր լսւագոյն վէպերն ու պարերգները: Վէյմարի դքսին խնդրանօք Ռառինի Փեդրային (1) թարգմանութիւնն եւս լրաւ, որոյ մէջ իւր ընդաբոյս խնամքն ու ուղղամութիւր կը փայլի:

Բայց այս թարգմանութիւնը Կիցօմ Դէլէն յետոյ երեւեցաւ, որ Նիլէրի գործոց վերջինն ու ամենագեղեցիլը, ելքոտ լուսամիտ մարդկանց գերմանական տեսարանի գլուխ-գործոցն է, և անտարակոյս թատերագրական արտեստին գլուխ-գործոց առաջին կարգըն եւս դրուելու արժանի: Սա զօրեզ եւ հասուն հանձնարայ, բանաստեղծական երեւական հասուն հասուն հանձնարայ, բանաստեղծական սկզբնական է: Ոլլերգութեան ձեւերն ու ընթացքը ոչ նկատողութենէ եւ ոչ նմանողութենէ ծնունդ տռած են, այլ նոյն իսկ նիւթոյն յըզացումէն:

Դժուարին է ըմբռնել թէ ինչպէս պատմագրաց եւ ճանապարհորդաց պարզ պատմութեամբ կարողացած է քանաստեղծի մը երեւակայութիւնը երկրի մը վերայ այսպէս լիսակատար և այսպի մանրամասն ծանօթութիւն ստանալ և զգածուիլ այն ամեն տպա-

(1) Փեդրա: Դուստր Մինոս իի և Պասիֆայեայս առ թեսէսի հետ ամեւնացաւ և նորա նպագովեցու որդւոյն սիրահարելով իւր տուփանքը յայտնեց նմա և տեսնելով՝ որ փամանակուրոյ զարհուրանք կ'աղդէ ի նա: զարպացաւ ու նախանձուն և թեսէսի զրպարտեց զնա իւր զարանակալ իւր պարկեցութեան: Թեսէս հաւատաց նմա և և առ զայրոյթ որտին Պոսիդոնի վրէժինդրութիւնը հայցեց իւր որդւոյն զայր: Այն ինչ նպագովեցու կառքով ծավիղէն կերթար, ահարկու նըհանգ մը ծավին խրտչեցուց նորա ձիերը, որք ժայռի մը զարնելով խրտակեցին կառքը և զնորը ըստ պահնեցին: Ուղիղեպիս յարոյց զայր, բայց Փեդրա իւր խընէն տանջուելով յայտնեց թեսէսի իւր մեղքը և խըլընքն սպանեց:

Նորութիւններով, զոր մարդ նոյն իսկ սեպերն շընելով կ'ունենայ: Գոգցես ամենայն ինչ Նելլետիա կը ներշնչէ: Ակյոմ Դէլլի մէջ: Անդ կը տեսնուին նուրա գիրքերն, անդ կը լսուին նորա երգերն, անդանօք կ'ամփիոփին նորա բովանդակ յիշատակարաններն, և ՚ի նա ակն յայտնի կը նշմարուին նորա բարքերն: Ահա այսպիսի պարզ և դիւցաղնական ժողովրդեան մը, այսպիսի նկարելի երկրի մը վիճակին վերաց կը կայանայ գործոյն կարեւորութիւնը, և այս է օր նորա ընթացքին մէջ այնչափ կենդանութիւն և միութիւն յառաջ կը բերէ: Հարստահարութեան և ըլունութեան այն ամեն տեսարանները, որք մի զինի միոյ յայլ և այլ տեղիս կը յաճախ խեն և զանազան ընտանեաց մէջ վիշտ կը պատճառեն, սերտիւ կապուած են իրարու հետ և Նելլետիոյ հարստահարութեան միակ և ընդարձակ պատկերը կը յօրինեն:

Բռնակալութեան դէմ եղած ընդդիմութիւնն ու յեղափոխութիւնը, ազատութեան զգացումներն, պարզ, տեղական և պատմական եռանդ մ'սւնին: Բարի գիւղացիք իրենց դրական իրաւունքը կը պահանջնեն և ըլունութեան ու խոստմաղքիութեան դէմ կը զինին: Իրենց սրտմասութիւնը հանգարտ, զօրաւոր եւ խոհական է: Իրենց յեղափոխութիւնը կանոնաւոր եւ երկիւղած է: Պըժուարին է Ռիւդլիի ժողովին գերմանական թատրոնին վերաց յառաջ ըերած յուղումն երեւակայել, ուր պատրաստութիւններն երբէք ծաղրաշարժ չեն, այլ առաւել նախատամատոյց: Ճշդիւ ՚ի նկատի առնուած Նելլետիոյ աւագամողալիոց այն ամեն ձեւակերպութիւնները, նախագահի առջեւ գրուած երկու խաչաձեւ սուրբերը, ծանրութեամբ և ճշդիւ հաշու-

ուտծ քու էնէրը , գումարմանն հանգիւ-
սաւոր պարզութիւնը , տեսաօրանին
վցըր , այս ամենը՝ մեծութեան եւ
պարզութիւնն երեւոյթ մը կ'ընծայեն
եւ երբ միաբանեալք արեւածագին
նախիին նշայներով միանդամայն կ'ուս
կը գտն և իրենց երկիւղած ձեռնարկը
ազօթքով կը որբագործեն , մարդ զար-
մացմամբ և պատկառանօք կը համակի

Հին աւուրց ժողովրդեան մը այս
պատկերին մէջ Ավյօմ Գէլլի մեծ կեր-
պարանքը աին յայտնի կ'երեւի : Եր-
ջոնիկի գուզովար մ' է այս , որ զայն
իւր հայրենակցաց շարժումէն այսպէս
կը չեղաքացնէ : Ավյօմ Գէլլ կը մերմէ
միաբանիլ և տօկոյն զօրութիւնը , վե-
հանձնութիւնը , անձնութիւնը և
հայրենասիրութիւնը լիովին իւր մէջ
կը տեսնալի :

Եղբէր այն ժամանեակ տիրութելի
կացութիւն մ' ունէր , մշտանորոգ եւ
անհակառակելի փառքով մը շրջապա-
տւած , ընտանեաց բարի հայր եւ
առտնին կենօք երջանիկ , բանտառեզ
ծախան սուբր գուշառի մը մէջ բարե-
բառու և վեհապահ , ուր ՚ի գործ գը-
րած էր իւր հոգւոյ բոլոր գործունէու-
թիւնը և իւր կենաց բովանդակ շահը ,
ունենալով իրբ զբանք իւր հայրեն-
եաց մեծահո շակ մարդկանց բարեկո-
մութիւնն ու խօսակցութիւնը : Բայց
աւալ , այս անդորրութեան և բարօ-
րութեանն մէջ իւր զօրս թիւնն ու ո-
ռազջութիւնը արագտողէս կը քայլոյ-
ւէր : Նա կանխուաւ կը զդար իւր վիւ-
ճակը և ասկայն իւր առ աշխատու-
թիւնն ունեցած եւանեղը չերնուազեր
Ռւսումն իրեն համար երջանկութիւն
մ' էր և ոչ յոդնութիւն . իւր յաջո-
զութիւնները զի՞քն կը խրախուսէին
և իւր համբաւն իր վերաց նոր պար-
առաջորութիւններ կը յաւելցը : Նորա
գլուխը թատերագրական յշացումնեւ-

բով լի էր , ուր զայնս իւր խորհրդա-
ծութիւններով եւ հետազոտութիւն-
ներով կը հասունցնէր :

Այս աշխատասիրութեան ժամա-
նակ , երբ յաջողութեանց եւ երջան-
կութեան երկայն ասպարէզ մ' ունե-
նալ կը յուսար տակաւին , անագործն
մահը եկաւ հարուածեց զայն խոր ա-
մենասիրելի յօժարութեանց մէջ : Կի-
յօմ Գէլլը ներկայացնելու համար
Պեռլին լրած ձանապարհորդութիւնը
զայն ուժաթափ ըրաւ , և անտի հի-
ւանդ վերադարձաւ : Իւր ընտանիքն
ու բարեկամները մեծ մոտանիցու-
թեան մէջ ինկան : Փոքր ինչ կազդու-
րեցաւ եւ իւր գործերն վերսկաւ :
1804 տարւոյն վերջը Վէյմարի ժա-
ռանկ իշխանին և Ռուսիոց մեծ-զըբ-
սուհւոյն ամուսնութեան հանդիսին
համար քնարերգական տեսարան մը
յօրինեց , որոյ ստանաւորները շնորհօք
և պերճութեամբ լի են :

Մի քանի ամսէն յետոյ վերսալն
հիւանդացաւ և հարբխային տենդէ մը
բռնուեցաւ , որ մահաբեր յատկու-
թիւն մ' ստանալով՝ 1805 տարւոց
մայիս 9 ին ընկճեց զայն : Քառասուն
և հինգ տարեկան էր : Իւր վախճանիը
քաղցը եղաւ : Յետօին շունչն արձակեւ-
լէն մի քանի վայրիկան յառաջ Տիկին
որ Վոլլոմէն հարցուց նմա թէ ինչ
պէս ես , պատասխանեց : միշտ աւելի
խորաց : Այս էր արդարեւ նորա կե-
նաց պատմութիւնը , այս է , որ նմա
այնչափ ծրամատոց եղաւ : այս է ,
որ Ելեկէլ լսել տուաւ թէ նա՝ բա-
ռին բավանդակ նշանակութեամբ ա-
ռաբինի բանաստեղծ մ' էր , որոյ սորը
հոգին իւր բոլոր կենաց մէջ միշտ
պատկառ կեցած է ճշմարտութեան
եւ յաւիտենական գեղեցկութեան :
Կամեցած էր նա , որ իւր թաղումն
անշուր լինի : Նորա մարմինը զիշերով

իւր վերջնի բնակարանը փոխադրեցաւ իւր բարեկամներով և երիտասարդաց բաղմութեամբ զբանապատռածէ: «Մայիսի խորհագ գիշեր մ՝ էր, կ'ըսէ Տիկին առ Վաղջումէն, սոխակաց այսպէս բարձր և այոշափ զեղուն երգելն լած չէի երբէք, որչոփ այս անգամ»: Երկինքը մմթին ամպերով ծածկուած էր: Երբ մարմինը շնորհն առջեւը դրուեցաւ, անմիջապէս լուսինն ամպոց ծոցէն դուրս ելաւ և իւր տմայն նշոյներով գագաղը լուսաւորեց, որոց վերայ Եկլէրի անունը փորագրուած էր, բայց երբ մարմինը շլլիմը դրուեցաւ՝ վերըստին անհետացաւ:

Ամենուստէք խնդրեցին, որ Վէյ մարի թատրոնը զինքն պայծառացնաղ քերթողին հանդիսաւոր մեծարտնք մ՝ ընծայէ, ուստի Կէօթէ Զանդակի բանաստեղծութիւնը թատրերգութեան ձեւով ներկայացնել տուաւ (հաւասորէն 10 նոյեմբեր 1805 ին) և այնոււ հետեւ սովորութիւն եղաւ. Եկլէրի ծննդեան աարեգարձը ամեն տարի տօնել: Կէօթէ այս ներկայացման համար սրտաշարժ վերջաբանը մը յօրինեց: Այս հանդիսաւոր և գաշն ձայնով մ՝ արտասանուած վերջաբանը, որ առ մարդն և առ բանաստեղծն խոնդաղութիւն հիացում մը կը ներշնչէ: անտարակոյս ՚ի փոռո Եկլէրի կոռուցուած բոլոր յիշանակարանաց մէջ՝ նորու սրտի ամենահաճելին է: Այս իեն սագրութիւնը չեմք կարող աւելի լոււ կերպով վերջացնել և ոչ իսկ լոււագոյն կերպով ամփոփել այն տպաւորութիւնը, զօր կը փափաքիմք, որ ընթերցողաց սրտին մէջ անջնջ մնայ, եթէ ոչ սոյն քնարերգական գրուտաեաց ներբող ներն համառօտագրելավ, որ մեզ առաւել արգարն, աղդուն և միանգաման անիեղջն ըլլով կը թուին:

«Մերն եղաւ նա, իցիւ թէ այս

վաեմ խոռըը մեր ազմկալից վշաին վերայ թագաւորէ, նա կամեցաւ առ մեզ, իբր յանքոյթ նաւահանգատի, կատաղի փոթորկէն յետոյ, մշտատեւ խաղաղութեան ճաշակն առնոււ: Սակայն իւր ոգին գէպ ՚ի ճմարտին, բարոյն և գեղեցին յաւիտենական թագաւորութիւնը կը վերապանար անդիմարմբելի զօրութեամբ, և նորա ետեւը գետնամած կը մնար ամբոխն ու ուամիկը, որ թէ և ոչնչ, այլ սակայն մեր վերայ կը ներգործէ . . . :

“ Իւր Այտերը, եւս քան զեւս պայծառ, կը բոցավառէին այն երիտասարդութեամբ, որ չը թաւամիր երբէք, այն արութեամբ, որ ագան կամ անագան անզգայ աշխարհի ընդդիմութեան կը յաղթանակէ, այն ամենաքարձր հաւատով, որ մերթ համարձակաթոիչ կը խոյանայ, մերթ յուշիկ կ'ընթանայ, որպէս զի բարին գործէ, զարգանայ եւ օգտակար լինի, որպէս զի գայ վերջապէս այն օրը, ուր ամենայն ինչ պիտի աղնուանայ . . . :

“ Դուք ճանաչեցիք զայն, դուք գիտէք թէ ինչպէս հսկայաբայլ կամեցողութեան և կատարելութեան սահմանը կ'ընթանար, գիտէք թէ ինչպէս, ժամանակի և միջոցի մէջէն, լուրջ ակնարկով մը ժողովրդոց բարքն ու մտածումներն կ'ընթեռնուր: Բայց գիտէք նաեւ թէ ինչպէս մեր մէջ, իւր արշուանքէն շնչառակառ, հիւանդութեամբ կը հիւծէր և դժուարաւ կապարինէր: մեք այս վերջին ախրապէս գեղեցիկ տարիներուն մէջ սորտ փորձն առինք, լշտակցելով նմա, քանզի նամերն էր . . . :

“ Ի կանուխ ժամանակաց այս անգառնաի վճիռն կարգացած էր նա, և վշաց և մահու ընտելացած: Եւ ահա վերջապէս ինչպէս որ զայն յաճախակի առողջացած աեսած էինք, տեսակի նաև

նորա փօխումն յաշխարհէս . ահա՞ի դորհուրանս մեր կատարեցաւ այն , յորմէ լնդ երկար յանհնարինս կը զանդիտէնէք : Բայց երբ նա իւր ակնարկը յերկիր խոնարհեցնէ , արդէն իւր վեհաշուք էութիւնը աստ փառաւորուած կ'երեւի : Ինչ որ երբեմն ժամանակակից աշխարհը նորա մէջ աւաղելի եւ եպերելի կը համարէր , մահն ու ժամանակը զայն աղնուացուցին :

“Բաղմաթիւ հանձարներ , որ լնդ նմա մրցեցան և ցաւ ՚ի սիրո ճանաշեցին նորա բարձր որժանիքն , այսօր նորա զօրութեամբ ոգեւորուած կը զգան զիրենք , կամակար նորա ապրած մթնոլորտին մէջ սահմանափակ լինելով : Նա զէպ ՚ի վսեմ բարձունք ները վերաթեւեց , սերտիւ կապուած լինելով այն ամենուն հետ , որք մեծարելի են մեզ : Տօնեցէք ուրեմն զայն . վասն զի ինչ որ կեանքը կիսով չափ կը չնորհէ մարդոցն , յաջորդ սերունդը ամբողջապէս կը պարտի նմա” :

Այս պրտաբուխ աղաղակը , “մերն եղաւ նա ո այսօր ողջոյն Գերմանիա կը կրկնէ : Երբէք ազգ մը՝ բանաստեղծ մը քննունեց և ոչ զայն իւրն անուանեց , զսեմ այնչափ զարմացմամբ , որչափ խանդաղատական սիրով : Եւ նա արժանի եղաւ այս լիդունելութեան եւ կարէ տիպար հանդիսանալ այն պաշտամամբ , զօր կը մասուցաներ բարեցն հետ զուգախառնեալ գեղեցին , այն բուռն եռանդեամբ , զօր կը տածէր մարդկաթեան օգտակար , մեծ և վսեմ համարած իրաց համար , այն բարձր գաղափարով , զօր ունէր այս աշխարհիս մէջ հանձարի պաշտօնին նկատմամբ և առ այս ունեցած անհուն անձնութիւնթեամբ , և վերջապէս մոքի և պրտի այն համբնթաց յառաջադիմութեամբ , զօր ամբ ըստ ամել կը լիներ : Կրկնենք կ'օթէն հետիւն համարի աւելացութիւնն աւելցնողը , ինպէս վերջութան ևս կ'ըսէ : ՚ի կանուխ ժամանակաց մարդն վշտաց գատապարտող այն անազառ վճիռն կարդացած և թշուառ ու վշտակիթ լինին է : Յետին ժամանակաց բանաստեղծնել էն և ոչ մին թերեւս իրմէ աւելի վառաւորուած չէ , այլ սակայն ծայրագոյն փառաց մէջ խէլթեւ ախրութիւն մը իւր գէքը կը համակէ եւ զինքը ողբացովերն ՚ի տես նորա կը գոչն , “Մերն եղաւ նա ո :

“Ինչ որ նախապէս նորա մէջ աւաղելի եւ եպերելի էր , մահն ու ժամանակին աղնուացուցին ու : Եւ իրուացի է այս , վասն զի նա ինքնին սկսած էր աղնուանալ , բաջութեամբ մարտնչիլ , որ ըստ օրէ իւր հոգին աւելի առ բարձր , աւելի անկեզծ կը լինէր և առաւել կը բարձրանար

Այս ունիւնէն սանդին վերայ , որ յԱստուած կը յանդէ :

Խիստ սակաւաթիւ են անմիք , զորս փառքն աւելի աղնուացուցած է ևսոգեւ որոած , ոչ ինքնին , այլ բարեցն և գեղեցին բացավառ սիրով : Նա որչափ ասպարիզին մէջ կը յառաջէր և հանձարով կը զարգանար , նշնչափ իւր անձին վերայ պարտաւորութիւններ կը յաւելցըր : Նա իւր անձը ըստ ամենայնի աշխատութենաւիրած էր և իւր հոգին իւր ունչոյն մէջ կը փայլի : Այս անձնուեր և զօրել , աղտատակը եւ ճոխընաթեամբ մէջ մարդն ու բանաստեղծը անբաժան էին իրարմէ : Նա բանաստեղծութեան եւ այն աղնիւ նըսպատակաց կը ծառայէր , զոր լնտարած էր ՚ի բոլըր սրտէ , ՚ի բովանդակ մը առց և յամենայն զօրութենէ , չունենալով եսութիւն , ունայնասիրութիւն , փառասիրութիւն և բարեկեցութիւն : Իւր հանձարի և բնաւորութեան ներշնչած համակրութիւնն աւելցնողը , ինպէս վերջութան ևս կ'ըսէ : ՚ի կանուխ ժամանակաց մարդն վշտաց գատապարտող այն անազառ վճիռն կարդացած և թշուառ ու վշտակիթ լինին է : Յետին ժամանակաց բանաստեղծնել էն և ոչ մին թերեւս իրմէ աւելի վառաւորուած չէ , այլ սակայն ծայրագոյն փառաց մէջ խէլթեւ ախրութիւն մը իւր գէքը կը համակէ եւ զինքը ողբացովերն ՚ի տես նորա կը գոչն , “Մերն եղաւ նա ո :

“ՄԵՐՆ եղաւ նա ո կարող են ը-
սել նաև ամեն անոնք, որ անսանելի
իրաց և նիւթական շահուց յորձանաց
անձնատուր եղած չեն և այլուր կարո-
նեն իրենց պատսպարանը, քան թէ
այս ստորին աշխարհիս մէջ. որովհետ-
աեւ իրմէ աւելի որոյ կարող եմք պատ-
շաճեցնել այս գեղեցիկ խափերը, որք
մի քանի շաբաթ յառաջ ծափահա-
րութեամբ ընդունուեցան : “Արար-
չագործութեան երեւոյթը, որշափ եւս
գեղեցիկ լինի ո. և ես կը յաւելում,
որշափ եւս գեղեցիկ երեւոյթը լինի
նմա . անօրա համար ոչ այլ ինչ է,
բայց եթէ իւր ճշմարիտ գեղեցիու-
թեան անդրադարձումն նա երեւոյ-
թի ներքեւ կը աեսնէր, կը խուզարիէր
իրականը, ճշմարիտ իրականը, այսինքն
իտէականը” : Այս այն խօսքերէն մին
է, որք վերջ կը տան վէճերու, սահ-
մանելով զանոնք և իրաց իրենց ճշգր-
րիտ բնութիւնն ընծայելով . Ա՛չ, սնո-
տի երազատեսներ չեն անոնք, որք ա-
ռօրեայ իրերէն աւելի կը փարին անոր,
որ յաւիտենական, բացարձակ և ան-
փոփոխ է, անոր, որ էն փառքք : Սակայն
հարկ չէ մոռնալ որ արուեստն ինքնին
որշափ սուրբ և որշափ երկնային լինի,
՚ի Սրբութիւն սրբոց առաջնորդող
ասախճաններն կը կազմէ միայն . ուստի
պէտք չէ նմա երկրպագանել իրեւ-
մեր Աստուծոյն : Մանաւանդ երբ կը
տեսնեմք, որ հանձարն զիս կ'առնու-
ճանապարհին վերայ և միջոցը վախ-
ճանին հետ շիտթելու վտանգին մէջ
կ'ինայ, այն ժամանակ հարկ է սուա-
ւել տռ հանձարն գոչել . “Ի վեր, ՚ի
վեր անդր բարձրացիր ո” :

Թարգ : — ՚ի Յըրանսէրէնէ
Մ. Ս. Յակովէնա :

ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին, 1876 Յ-ի 20.

Ամսոյս 25ին կ'ըսկի օրը Աւագիս
Լոյիսի ընկերութեան (etlore) անուն
շոգենաւը Յուպակեյու առ Ձեւ խորըս-
խեց, և ժամ 8ին մեկնեցանք անտի.
գիշերը ժամը 5 էր հատանք Հայֆա
կամ Գայֆա փոքրիկ աւանը . նաւա-
հանգիսար գեղեցիկ և բնական ծոց մի
է զէպ յարեւմոււա մտած, ծովի ա-
րեւմաեան մրրկոյցը փոմմորիկներէն
խուլած ատեն, նաւերը աստ կապա-
ւինին և վերահաս վաանգներէն կ'առ
զատին . բնակիչք Մահմետականք և
Յցնք, սովորական լեզու Արաբերէն .
Աւանը Կորմելոս լերան սասրութը և
ծովեղերքը կառուցուած է քարուկիր
շնուռածովք, և մէկ անկիւնը Գեր-
մանայի գաղղթականք Եւրոպական ձե-
ւով փողոցները լայն և աւզգածիոց,
կարգաւորեալ տաւներ շնած են, շըր
ջապատը փոքրիկ պարակներ եւ ար-
տեր մշակելով, աւանին գիւղը իւր բո-
լը զուարձալի պարագաներավ գտալի
է, լերան սասրատէն մինչ ՚ի գլուխը
բաւական լայն ճանապարհ մի բացուած
է, որ Լատոնին կրօնաւորաց մենաստանը
կ'առաջնորդէ . այս մենաստանը բաւա-
կան մէծութիւն կառուցուած է յանուն
Եղեայի Մարգարէին, ինչոյն կ'աւանդէն
աստ ալօթեց Մարգարէն անձեւի
համար յաւուրս Արաբու, և աստ
կոտորեց Բահուզու Մարգարէից ջոկը
զոհ մասուցանելու ատեն . Երկրագոր-
ծութիւնը և ձիթենեաց մշակութիւ-
նը ծովեղերքէն հետի են : Շոգենաւին
ճանապարհը սցն ափունքէն լաստորե-
լով կ'երեւին կարգաւ Աքքէ քաջա-
քը իւր ամուր բերդով և գեղեցիկ նա-
ւահանգստովն, որ Արարից զուաը
կամ կաստանը կ'անուանի, որոց վերաց

